

Տ. ԲԵՐԻԱ

87

5274

ՀԱԳՈՒ
ԿԵՑԻՈՎԵԼԻ

3K1714

4 - 45P

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵ՞Ք

10 AUG 2005

ԱԿԱՆԱՎՈՐ
ԲՈԼՃԵՎԻԿՆԵՐԻ
ԿՅԱՆՔԸ

ՀԿՊ19
Կ-95F

Լ. Բ Ե Ր Ի Ա

1 DEC 2009

Լ Ա Դ Ո
ԿԵՑԽՈՎԵԼԻ

1876—1903

230

ՀԱՅԿՈՒՄՀՐԱՏ • 1937 • ՅԵՐԵՎԱՆ

101 MAR 2013

5274



3289-91

Л. БЕРИЯ
ЛАДО КЕЦХОВЕЛИ
Армпартиздат, Ереван, 1937





Ա.ԴՈ ԿԵՑԽՈՎԵԼԻ

I

Լենինի-Ստալինի կուսակցությունը նշանավոր շատ բոլշևիկներ ե դաստիարակել ցարիզմի դեմ մղվող պայքարի տարիներին, պրոլետարական հեղափոխության հաղթանակի համար մղվող դասակարգային մարտերում։ Նրանցից շատերը դոհվեցին ցարական բանտերի զնղաններում, տաժանավայրերում և աքսորում՝ ցարական դահիճների ձեռքով, քաղաքացիական պատերազմի պանծալի, հերոսական մարտերում։

Բոլշևիզմի նշանավոր մարդկանց թվին ե պատկանում նաև զավակների հիշատակը և նրանց կյանքի ու հեղափոխական պայքարի որինակով դաստիարակում ե բոլշևիկների նոր սերունդը։

Բոլշևիզմի նշանավոր մարդկանց թվին ե պատկանում նաև կաղող կեցխովելին՝ Ընկեր Ստալինի մերձավորագույն զինակիցը Վրաստանի ու Անդրկովկասի հեղափոխական շարժման արշալույսին։ Ընկեր Լաղո կեցխովելին բանվոր դասակարգի հեղափոխական շարժման մեջ մտավ անցյալ դարի իննսունական թվականներին։

Իննսունական թվականները Ռուսաստանում դասակարգային մարտերի պատմության մեջ մտան վորպես Լենինի լարված պայքարի ըրջան, մի պայքար, վոր Լենինը մղում եր ստեղծելու համար բանվոր դասակարգի այնպիսի մարտական-հեղափոխական մի կուսակցություն, վորն ընդունակ լինի լուծելու իմակերիալիդմի և պրոլետարական հեղափոխությունների եպոխայի խնդիրները։ Ռուսաստանը իմակերիալիզմի հակասությունների հանդուցային կետն եր, չտեսնված քաղաքական ճնշման և դիշատիչ շահագործման ոջախը։ Համաշխարհային հեղափոխական շարժման կենտրոնը տեղափոխվեց Ռուսաստան։

«Պատմությունը, —գրում եր Լենինը, —այժմ մեր առջև դրել

ե մի մերձավորագույն խնդիր, վորոն ամենահեղափոխականն ե վորևե այլ յերկրի պրոլետարիատի բոլոր մերձավորագույն խընդիրներից։ Այդ խնդրի իրավործումը վոչ միայն յերսուական, այլև (կարող ենք մենք ասել այժմ) ասիական ռեսուլցիայի ամենազոր պատվարի կործանումը, ռուսական պրոլետարիատին կղարձներ միջազգային հեղափոխական պրոլետարիատի ավանդարդը» (Վ. Ի. Լենին, Յերկեր, Հասոր IV, էջ 382)։

Լենինն առաջինն եր, վոր առաջադրեց այն լոգունը, թե սոցիալ-դեմոկրատիան պետք ե նեղ պրոպագանդայից անցնի մասայական ազիստացիայի, լվավիդացիայի յենթարկի կրուժկովչչնան և կաղմակերպի բանվոր դաստիարդի քաղաքական պայքարն ինքնակալության դեմ։

Լենինն առաջինն եր, վոր իրականացրեց պրոպագանդայից ադիտացիայի անցնելը՝ Պետերբուրգի իր սուելծած «Բանվոր դասակարգի աղատագրման համար պայքարող միության» մեջ։

Լենինի գաղափարները թափանցեցին Անդրկովկաս։

Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի լենինյան դրոշը կովկասում բարձրացրեց ընկեր Ստալինը։

Ընկեր Ստալինի գեկավարությամբ 1898—1900 թվականներին ծնունդ առավ և ձեւավորվեց կովկասի սոցիալ-դեմոկրատիայի հեղափոխական-լենինյան թեր։

Ընկեր Ստալինը, ընկերներ կեցիովելու և Ծուլուկիձեյի հետ միասին, թիֆլիսի և Բագվի սոցիալ-դեմոկրատիական կազմակերպությունները առաջնորդեց գեղի քաղաքական դորձադուների զեկավարումը։ Իրականացնելով վճռական անցումը պրապարանդայից ու ադիտացիայից գեղի բանվոր դաստիարդի մասսայական-քաղաքական պայքարի կաղմակերպումը։

Լաղոն կեցիովելին սլրոֆեսիոնալ հեղափոխական եր, լենինյան-իսկրայական ընդհատակի ականավոր կազմակերպիչ։ Նա խոր ու ուշիմ կոնսպիրացիան հմտորեն զուգակցում եր թիֆլիսի ու Բագվի բանվորների հետ պահպանվող ամենորյա կապի հետ, կազմակերպելով ամենաբարդ և ամենաժամանակակի հեղափոխական ձեռնարկումները։

Վլադիմիր (Լաղոն) Զախարյելիչ կեցիովելին ծնվել է 1876 թվականի հունվարի 2-ին՝ թիֆլիսի նահանգի, Գորիի գավառում Տղվակավի դյուլում։ Նրա հայրը՝ Զախար կեցիովելին՝ քահանա յեր և ուներ 5 տղա ու մի աղջիկ։ Լաղոն դեռ 8 տարեկան ել չկար, յերբ վախճանվեց նրա մայրը։ Կարիքն ու չքալորությունը լաղոյի ավագ յեղայրներին հարկագրեցին հեռանալ

Հայրական տնից։ Նրանք գտնվում եյին վրաստանի զանազան անկյուններում։ Նրա ավագ յեղայրը նեկոն 1878—1885 թվականների ժամանակաշրջանում նարողնիկ եր և կապ եր պահպանում ուսւական նարողների հետ։

1883 թվականին 7-ամյա Լաղոյին տվին Գորիի հոգեոր դըպոցը, այդտեղ նա հավատակությամբ կարդում եր վրացական կլասիկների արգելված գրքերը, վորոնք գիտելիքների ծարավ եւ յին զարթեցնում նրա մեջ։

Լաղոն վորք հասակից զգայուն, հանդարտ, լուրջ և հանգստաբարոր յեր։ Յեթե նա ձեռնամուխ եր լինում վորեկ գործի, ապա մեծ համառությամբ մինչեւ վերջը հասցնում եր գործը։

Լաղոն իր բնավորության հաստատակամությունն ու նպատակասությունը պահպանեց մինչեւ իր հիանալի կյանքի վերջը։

Լաղոն դեռ հոգեոր դպրոցում աթեսիստ դարձավ։ Նա ասպահ չեր ճանաչում, ժամերգություն չեր սիրում և ընկերների մեջ անստվածի համբավ ուներ։

Արձակուրդը Լաղոն անց եր կացնում իրենց Տղվակի դյուլում։ Նա կենդանի հետաքրքրություն եր հանդես բերում դեպի գյուղացիների կյանքը և ծանօթ եր իրենց գյուղի համարյա բոլոր գյուղացիական ընտանիքների հետ։ Գյուղացիներն ապրում եյին ծայրակեղ կարիքի մեջ։ Նրանց անչափ խեղում եյին հարկերը, տուրքերը, հողի վարձագինը, աղնվականների ու կալվածատերների կամայականությունը։ Վոստիկանական իշխանությունները կողոպտում եյին գյուղացիներին, խուժում եյին տները և ասպառքների (ուժօնմկ) դիմաց խորում եյին գյուղացիներից տնային պիտույքները, տանում եյին անասունները և այլն։ Դիմադրության նվազագույն փորձ իսկ լինելու դեպքում գյուղացիներին անողոքաբար ծեծում եյին մտրակներով։

Այդ վայրենի դատաստանատեսի պատկերները ծանր տպալություն եյին գործում Լաղոյի վրա և ատելության զգացմունք եյին արթնացնում նրա մեջ ստրկացնողների՝ ցարի, կալվածատերների և աղնվականների հանդեպ։

Լաղոն հաճախ վեճի յեր բոնվում հոր հետ, դատապարտելով նրան գյուղացիներից յեկեղեցական տուրք զանձելու համար։ Լաղոն ագիտացիայի յեր մղում և համոզում եր գյուղացիներին, վոր աստված չկա, վոր աստծուն հարել են քահանաները, վոր տերտերներին չպետք ե վճարել յեկեղեցական տուրքեր։ Լաղոյին «քրիստոնեական ճանապարհի վրա» բերելու մի շարք փոր-

ձերը, վոր անում եր հայրը, կատարյալ անհաջողությամբ եյին
վերջանում:

Լադոն հոգեսոր դպրոցի 4-րդ դասարանում դանվելիս սկսեց
լույս ընծայել ձեռագիր «Գանտիադի» («Արշալույս») ժուռնալը,
վորը յերկան բերվեց աղմինիստրացիայի կողմից: Լադոն իր
վարքի համար յերկու ստացավ: Վաս թվանշանի պատճառով նա
չընդունվեց Թիֆլիսի հոգեսոր սեմինարիան, և հոր յերկարատե-
շանքերից հետո նրան թողին Գորիի հոգեսոր դպրոցում 2-րդ տա-
րին՝ «վարքն ուղղելու համար»:


II

Գորիի հոգեսոր դպրոցում Լադո Կեցխովելին առաջին անդամ
ծանոթացավ ու մտերմացավ ընկեր Ստալինի հետ: Ընկեր Ստա-
լինը Լադո Կեցխովելուց ավելի փոքր եր և մտավ դպրոցի մի-
ջին-նախապատրաստական դասարանը 1888—1889 ուսումնական
տարում, յերբ Լադոն արգեն 3-րդ դասարանումն եր:

Կեցխովելին, ավարտելով Գորիի հոգեսոր դպրոցը, 1891 թվա-
կանի սեպտեմբերին մտավ Թիֆլիսի հոգեսոր սեմինարիան: Գե-
րազանց առաջադիմություն ցույց տալով բոլոր առարկաներից,
նա հատուկ ջանասիրությամբ ուսումնասիրում եր պատմությունն
ու դրականությունը: Շուտով նա մտավ սեմինարիայի այն խըմ-
բակը, վորը զեկավարում եր վրաց հայտնի գրող Ե. Նինոշվիլին:


Այդ խմբակն իր բնույթով գրական-լուսավորական եր. նրա-
նում ուսումնասիրվում եյին Տուրգենևի, Դոստոյեվսկու, Լ.
Տոլստոյի, Բելինսկու, Դոբրոլյուբովի, Զերնիչևսկու, Գերցենի,
Պիսարիի, Կազբեզի, Բարաթաշվիլու և ուրիշների յերկերը: Սե-
մինարիայում կատաղորեն իշխող ճիզվիստական ուժերմը հարկա-
դրում եր այդ խմբակի պարագմունքներն անցկացնել գաղտնի:
Սեմինարիստներին լրտեսում եյին:

1893 թվականի նոյեմբերի 30-ին յերիտասարդ Լադո Կեցխո-
վելին Թիֆլիսի ծայրամասում, Սարուրթալոյում, կազմակեր-
պեց սեմինարիայի աշակերտների առաջին ժողովը, վորտեղ վորոշ-
վեց գործադուլ հայտարարել, վորպես բողոքի նշան սեմինարիա-
յում արրող ուժեմի զեմ: 1893 թվականի դեկտեմբերի 1-ին
սկսվեց գործադուլը և տեսեց 4 որ: Աշակերտները վրաստանի եք-
զարխին ներկայացրին իրենց պահանջները, վորոնց գլխավոր կե-
տերն եյին՝ գաղարեցնել սեմինարիստների լրտեսումը, հեռացնել
սեմինարիայից վերակացուներ իվանովին ու Պոկրովսկուն, ուսու-



Ի. Վ. ՍՈՒԼԻՆ (1900 թ.)

Թիֆլիսի ժանդարմական վարչության
արխիվում գտած լուսանկարից:



(Գ 0091) մ Գ 1.0 2 II .1

Արթուր Առքանգաման Շահբեկին
Հայութաբարյան ճանապարհութեան համար Նորագույն



շիչ Բուլղակովին, վոր կամակոր (самодур) ու մարդատյաց մեկն եր, և Հիմնել վրաց լեզվի ամբիոն, մի լեզու, վորը ցարական չխովնիկները «շան լեզու» Եյին անվանում, դաժանորեն հալածելով մայրենի լեզվով խոսող սեմինարիստներին:

Դրուխը կորցրած վարչությունը, անկարող լինելով վերջ տալու գործադուլին, մի ամսով փակեց սեմինարիան:

Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության պետ Յանկովսկին Պետերբուրգ ուղարկեց հետեւյալ տակնալալից հետպերը՝

«Պետերբուրգ. Ժանդարմների կորպուսի հրամանատարին:

Ուղղափառ սեմինարիայի սաների մեծամասնությունը, պահանջելով հեռացնել դաստիարակներից միքանիսին և Հիմնել վրացական գրականության ամբիոն, դադարեցրել ե պարագանքները: Հորդորներն ապարդյուն անցան: Եքղարիսի հեռագրի համաձայն՝ Սինոդի կարդաղը ուղարկությամբ սաներն արձակվում են մինչև հունվարի 8-ը»:

Աշակերտների արձակմանը հետեւյին ուսուրեսիաներ. 87 աշակերտ վարչությին սեմինարիայից. «Վայլի տոմսով» 23 վարչածների, այդ թվում նաև Լազոն կեցխովելուն—գործադուլի կազմակերպչին, արգելվեց Թիֆլիսում ապրել:

1893 թ. գեկտեմբերից մինչև 1894 թ. ողոստոսը Լազոն ապրում եր Տղվարի գյուղում, իսկ 1894 թվականի աշնանը ուղերձեց կիւ, վորաեղ նրան հաջողվեց մտնել հոգեոր սեմինարիան:

Ինչպես հայտնի յէ, այդ տարիներին կիւմում գոյություն ուներ անեղալ սոցիալ-դեմոկրատական խմբակ, վորը 1897 թվականին, լեհական սոցիալ-դեմոկրատների կիւվի խմբակի հետ միաձուլվելուց հետո, կաղմեց «Բանվոր դասակարգի աղատագըրման համար պայքարող կիւվի միություն», վորն զգալի դեր խաղաց ԱՄԴԻԲԿ-ի առաջին համագումարի գումարման գործում: Լազոն կեցխովելին ակտիվորեն մասնակցում եր կիւվի հեղափոխական սոցիալ-դեմոկրատական խմբակների աշխատանքին:

Կեցխովելու հեղափոխական աշխատանքն աննկատելի չընաց կիւվի ժանդարմերիայի համար: 1896 թ. ապրիլին նրան ձերբակալեցին: Կիւվի բանտում 3 ամիս մնալուց հետո Լազոն արտաքսվեց հայրենիք, վոստիկանության հսկողության տակ, յերկու տարի ժամանակով: 1896 թվականի աշնանից մինչև 1897 թվականի ողոստոս ամիսը նա ապրում եր սկզբում Տղվարի գյուղում, ապա՝ Զավար գյուղում (Հարավային Ոսեթիա):

1897 թվականի սեպտեմբերին Լազոն ծածկվեց վոստիկանու-

թյան վերահսկողությունից և փոխադրվեց թիֆլիս, վորտեր մտավ «Մեսամե-ղասի» կազմակերպության մեջ:

«Մեսամե-ղասին» առաջին վրացական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունն էր: 1893—1898 թվականների ժամանակաշրջանում այդ կազմակերպությունը լեզաւ կերպով քարոզում էր մարքսիզմի տնտեսագիտական ուսմունքը և գրական վորոշում դեր էր խաղում Վրաստանում ու Անդրկովկասում սոցիալ-դեմոկրատիայի գաղափարները տարածելու գործում:

1898 թվականին այդ խմբի մեջ մտավ ընկեր Ստալինը: Ընկեր Ստալինի՝ «Մեսամե-ղասի»-ի մեջ մտնելով, նրա նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ, ծնունդ առավ ու ձեւավորվեց վրացական սոցիալ-դեմոկրատների հեղափոխական-մարքսիստական թեր:

Ինչպես հայոնի յե, բոլշևիկյան կուսակցության ստեղծող Վլադիմիր Իլյիչ Լենինը հսկայական նշանակություն էր տալիս անլեզաւ մամուլին: Պրոլետարական կուսակցություն ստեղծելու լենինյան պլանի մեջ հիմնական ողակն էր հանդիսանում համառուսական քաղաքական թերթի կազմակերպումը, մի թերթ, վորը պիտի հանդիսանար վորպես բանվորական մասսաների հետ սերտորեն կապված պրոֆեսիոնալ հեղափոխականների գաղափարական ու կազմակերպական կենտրոն: Անլեզաւ մամուլ կազմակերպելու հարցը 1898 թվականին սուր տարածայնությունների առարկա դարձավ «Մեսամե-ղասի»-ի հեղափոխական փոքրամասնության մեջ:

Մինչեւ «Մեսամե-ղասի»-ի մեծամասնությունը գուեհացնում էր մարքսիզմը և հարմարեցնում էր բուրժուական նացիոնալիզմի շահերին, իր գործունեյությունը շարունակում էր լեզարմանություն, ընկեր Ստալինը, Կեցիսովելին և Ծովուկիձեն վճռական պայքար մղեցին մարտական-հեղափոխական անլեզաւ թերթ ստեղծելու համար:

Այդ պայքարում Լադոն բացառիկ դեր խաղաց: Նա թիֆլիսում ծառայության մտավ Խելաձեյի տպարանը և սկսեց համառորեն ուսումնասիրել տպարանային գործը: Լադոն շուտով այդտեղ տպագրեց իր կողմից վրացերեն թարգմանված Դիկտունի բրոշյուրը՝ «Մի պատու հացի պատմությունը»: Դա վրացերեն առաջին անլեզաւ գրքույին էր: Լադոյին հաջողվեց տպագրել նաև մի քանի թուուցիկներ ու բրոշյուրներ:

Լադո Կեցիսովելին ընկեր Ստալինի մերձավորագույն բարեկամն էր: Կեցիսովելու բնակարանում ընկեր Ստալինը և Լադոն,

համախ մինչև ուշ գիշեր նստած, զբույց ելին անում բանվորական շարժման մասին, Լենինի մասին, Պլեխանովի մասին...

III

1898—1900 թվականներին ընկեր Ստալինը, Լադո Կեցիսովելը և Ծովուկիձեյի հետ միասին, թիֆլիսի սոցիալ-դեմոկրատների աշխատանքը փոխադրեց ինքնակալության դեմ մղվող մասայական աղիտացիայի ու քաղաքական պայքարի ուղևերի վրա: 1899 թվականին թիֆլիսում, քաղաքից դուրս, կազմակերպվեց մի մայովկա, վորտեղ իր բոցաշունչ ճառով Լադոն բանվորներին կոչ էր անում պայքար մղելու ինքնակալության դեմ:

Ընկեր Վանո Ստուրուան այդ մայովկայի վերաբերյալ իր հուշերում գրել ե.

«1899 թվականին մեր անլեզաւ խմբակները վորոշեցին անլեզաւ մայովկա անցկացնել քաղաքից դուրս: Հավաքվեցին մոտ 70 մարդ: Այդ որը յես առաջին անդամ տեսա Լադո Կեցիսովելուն: Մայովկան սկզբեց, առաջին ճառոն արտասանեց Միխո Բոնձորիձեն, ապա հանդես յեկավ Լադո Կեցիսովելին» («Ռեվոլյուցիս Մատիանե», № 2, 1925 թ., էջ 73—74):

1899 թվականի վերջերին Լադո Կեցիսովելին կազմակերպում ու ղեկավարում է թիֆլիսի ձիաքարչի բանվորների գործադուլը: Ձիաքարչի բանվորները 13-ժամյա բանվորական որվա համար ստանում եյին 90 կոպեկից մինչև 1 ոուրլի աշխատավարձ, ընդվորում այդ աշխատավարձի մեծ մասը պահպում էր վորտեղ տուգանք: Բանվորներին տուգանում եյին ամեն մի առիթով՝ արագ յերթի համար, դանդաղ յերթի համար, անզգույշ յերթի համար, կոպտության համար, անհնազանդության համար, և այլն: Այդ սիստեմի չնորհիլ 1899 թվականին 15 աշխատանքային որվա ընթացքում միջին հաշվով 15-ական ոուրլի ստացան միայն 5 բանվոր, 476 բանվոր ստացան 1 ոուրլուց մինչև 10 ոուրլի, իսկ 21 հոդի ստացան 1 ոուրլուց պակաս: Տուգանքների դեմ բողոքելու պատճառով բանվորների հետ զաման զատաստան եյին տեսնում: Այսպես՝ ձիաքարչի բանվոր Զ. Լոմիձեն, սոտմիստը Բրունոյի մոտ գործադուլի առթիվ հարցաքննվելիս, հայտաբար բեր:

«Տրամվայի դիրեկտորի խնդիրքով մեզ տարան 10-րդ քաղաքամասի վոստիկանատունը, վորտեղ պրիստավ թումանովը, մի շարք հարվածներից հետո, ստիպում էր անպայման յեն-

Թարկվել տրամվայի պետի պահանջներին, սպառնալով հակառակ գեղագում արտաքսել թիֆլիսից»: (Վրաստանի ԽՍՀ-ի կենտրոնական արխիվային վարչություն, Փ. 7, գործ 255, թիրթ 25):

Գործադուն սկզբեց 1900 թվականի հունվարի 1-ին և վերաշարվ հոգուտ բանվորների:

Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական խմբի ղեկավարությամբ, մի խմբի, վորը գլխավորում ելին ընկերներ Ստալինը, կեցիովելին և Ա. Ծուլուկիձեն, աճում և ծավալվում եր բանվորների քաղաքական պայքարն ինքնակալության դեմ: 1901 թվականը հոչակվեց պրոլետարիատի առաջն բացահայտ քաղաքական յեւույթով:

Ընկեր Ստալինը և Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատիայի ղեկավար խումբը 1901 թվականին նախապատրաստեցին մայիսմեկյան բանվորական ցույցը՝ քաղաքի փողոցներում: Բաց թողնվեց մի թոռուցիկ, վորի մեջ ձեւակերպվել ելին բանվոր դասակարգի պահանջները, և բացատրվել եր պրոլետարիատի պատմական դերը: Ընկեր Ստալինի անձնական ղեկավարությամբ մշակվել եր արդ ցույցի պլանը և կատարվել եր անհրաժեշտ կազմակերպական ամբողջ աշխատանքը:

1901 թ. ապրիլի 22-ին Սոլդատսկիյ ջուկայում, նախկին Ալեքսանդրյան այգու ուսունում, տեղի ունեցավ մայիսի մեկին նիկրված ցույցը: Ցույցին մասնակցեցին Թիֆլիսի գործարանների ու Փաբրիկաների մոտ 2000 բանվորները, վորոնք հանդես յեկան կարմիր դրոշով: Ցույցարանների վրա հարձակվեցին վոստիկանությունը և կաղակները: Ընդհարման ժամանակ վիրավորվեցին 14 բանվոր և ձերբակարվեցին 50-ից ավելի ցույցարաններ:

Ընկեր Ստալինը մասնակցում եր այդ ցույցին և անձամբ ղեկավարում եր ցույցը:

Թիֆլիսի—ոռւսական ինքնակալության կովկասյան միջնարերդի—փողոցներում բանվորների կատարած ցույցը քաղաքական խոչըրադույն դեպք հանդիսացավ և հսկայական հեղափոխական աղբեցություն գործեց ամբողջ կովկասում:

Թիֆլիսի ցույցի առթիվ լենինյան «Իսկրա» թիրթը 1901 թվականին գրել է.

«Ապրիլի 22-ին, կիրակի որը Թիֆլիսում տեղի ունեցած դեպքերը պատմականորեն նշանակալից են ամբողջ կովկասի համար. այդ որից կովկասում մկանում ե բացահայտ հեղափոխական շարժում»:

Լաղո կեցիովելին չկարողացավ մասնակցել այդ ցույցին:

1900 թվականին նա Թիֆլիսի ղեկավար կուսակցական խմբի վուուշմամբ—վորին գլխավորում եր ընկեր Ստալինը—Բաղու յեր ուղարկվել կուսակցական աշխատանքի:

Ընկեր Ստալինը և Թիֆլիսի ղեկավար կուսակցական խումբը կազոյին հանձնարարել ելին ամբացնել Բաղու սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը և անեղալ տպարան կազմակերպել այնտեղ:

Լաղո կեցիովելին իր յեռանդուն աշխատանքով աշխուժացրեց Բաղու սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը և լենինյան-իսկրայական կերպարանը տվեց նրան: 1901 թվականին կազմակերպվեց ՌՄԴԲԿ-ի Բաղու սուաջին կոմիտեն՝ լենինյան-իսկրայական ուղղությամբ:

IV

Բաղուում Լաղո կեցիովելին ապրում եր անլեգալ կերպով, կեղծ անձնապատճենով, մերթ Դեմետրաշվիլի անունով, մերթ Նիկոլայ Սելիբռով անունով: Կեցիովելուն վնասուելու համար Թիֆլիսից ժանդարմոններ ուղարկվեցին Բաղու, բայց հմուտ կոնսպիրացիայի շնորհիվ կեցիովելուն հաջողվեց համեմատարար յերկար ժամանակ թաղնված մնալ:

Լաղո կեցիովելին Թիֆլիսի ղեկավար խմբի և անձամբ ընկեր Ստալինի ղեկավարությամբ ու ողնությամբ 1901 թվականին Բաղուում կազմակերպեց ընդհատակյա տպարան, վորը հանդիսանում եր մեր կուսակցության խոչըրադույն տպարաններից մեկը: Թիֆլիսի ղեկավար խումբը փող, ըրիֆտ հայթայթեց տպարանին, լաղոյին ողնելու համար յերկու գրաշար ուղարկեց սոցիալ-դեմոկրատ բանվորներից: Թե ինչպես Լաղոն հմտուեն եր դուրս գալիս տպարան ստեղծելու հետ կապված մի շարք դժվարություններից, այդ մասին պատմում ե Լ. Բ. Կրասինը.

«... Վոչ մի հնարավորություն չկար տպարական մեքենա գնելու և սիստեմատիկար թուղթ, ներկ, ըրիֆտ և այլն դնեցու, վորովհետեւ պահանջվում եր նահանգապետից վկայական ուղնենալ տպարան բանալու իրավունքի համար: Ընկ. Լաղոն շատ հատարակ կերպով դուրս յեկալ այդ դժվարությունից: Նա ՅԵԼի-գավետողակի նահանգապետի կողմից տրված վկայական կազմեց իր անունով՝ տպարան բանալու իրավունքի համար. այդ վկայականն արտադրեց նախապես ստացած՝ նահանգապետի շտամպը կրող բլանկի վրա և ապա ինքն ստորագրեց այդ փաստաթուղթը»

նահանդապետի փոխարքեն . . . կեզծ վկայականի պատճենը հանեց և հստատել տվեց Բագվի նոտարի մոտ. այդպիսով ստացավ մի փաստաթուղթ, վորի վրա արդեն վոչ մի կեղծ ստորագրություն չկար: Այդ փաստաթուղթով Լադոն բարեհաջող կերպով ձեռք բերեց անհրաժեշտ մեքենան ու նյութերը, և ՌՄԴԲԿ-ի ընդհատակյա տեխնիկան սկսեց իր աշխատանքը Բագվում . . .»:

ՌՄԴԲԿ-ի՝ Թիֆլիսի ղեկավար խմբի հանձնարարությամբ Լադո Կեցիսովելու կողմից կազմակերպված Բագվի տպարանը խոշորագույն նշանակություն եւ ունեցել վոչ միայն կովկասյան սոցիալ-դեմոկրատիայի, այլև ամբողջությամբ վերցրած վողչ Ռուսաստանի հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի համար: Այդ տպարանում 1901 թվականի սեպտեմբերից սկսեց լուս տեսնել վրացական առաջին անլեզաւ «Բրձոլա» («Պայքար») թերթը՝ Թիֆլիսի հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի որդանը: «Բրձոլա»-ն լենինյան-խոկրայական ուղղության առաջին հեղափոխական թերթն եւ յեղել կովկասում:

«Բրձոլա»-ն խնդիր եր առաջադրում լայնորեն ծավալելու աղիստացիան, կոչ եր անում բանվոր դասակարգին պայքար մղելու ցարի, կարգածատերերի ու կապիտալիստների գեմ: Այդ թերթը հռչակեց սոցիալիզմի համար պայքարող ամբողջ Ռուսաստանի բանվոր դասակարգի շարքերի անխորի միասնությունը:

«Բրձոլա» թերթը պաշտպանում եր պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարը, մերկացնում եր «լեզու մարքսիստներին» և եկոնոմիստներին, պաշտպանում եր բանվոր դասակարգի բացահայտաքական կոմիտե և բուրժուա-դեմոկրատական հեղափոխության մեջ պրոլետարիատի հեղեմոնիայի լենինյան դաշտիաը:

Թիֆլիսի ղեկավար սոցիալ-դեմոկրատական խմբի թուուցիկ-ները, վորոնք տպվում եյին տպարանում, ամենալայն չափով տարածվում եյին կովկասում: Բանվորների ու զինվորների մեջ առանձնապես լայնորեն եյին տարածվում այն թուուցիկները, վորոնք բաց եյին թողնվել 1901 թվականին՝ Վրաստանը ցարական Ռուսաստանին այսպես կոչված «միացնելու» հարյուրամյակի տոնակատարման կապակցությամբ: Այդ թուուցիկները ցրված եյին ամենուրեք, դրանք կարգում եյին նաև դիմուրները, հավաքվելով 12—15 հոգուց բաղկացած խմբերով:

«Բրձոլա» թերթի հրատարակած թուուցիկներից մեկում ասված եր.

«Այսոր, յերբ հաղարավոր աշխատավոր ժողովուրդը ու նրա

ներկայացուցիչները վտում են բանտում, այսոր, յերբ մեր աչքի առջև ամեն որ հսում են այդ տանջլված բաղմության արյան գետերը, այսոր, յերբ ազատ խոսքը, գործողությունը, յեղբայրական սերն արգելված պտուղ են այդ բաղմաչարչար ժողովրդի համար և յերբ կառավարության նողկալի գործակալները կաշառակերություն, վախ, այլասերում են սերմանում հասարակության մեջ, այսոր, յերբ ամեն մի անկեղծություն ու աղնվություն գտնվում են կառավարության վերահսկողության տակ և այդ նողկալի գեմ կատաղի պայքար և մզում հենց Ռուսաստանի ամենալավագույն մասը, այսոր ահա, այս ժամանակ, մեր աղնվականությունը հանդես ե գալիս ժողովրդի անունից և շնորհակալություն ե հայտնում նույն այդ կառավարությանը, յեղբայրաբար սեղմելով նրա ձեռքը!!! . . .

Միանանք ուրեմն, բարեկամներ, միանանք, բոլոր յերկիրների բանվորներս այսորվա նողկալի կառավարության գեմ հաղթանակ տանելու համար»: (Վրաստանը Ռուսաստանին «միացնելու» հարյուրամյա հոբելյանի առթիվ բաց թողնված թուուցիկից, 1901 թ. սեպտեմբեր: Հրատարակություն «Բրձոլա»-յի խմբագրության, «Բրձոլա»-յի տպարան):

Սա ցարական իշխանության և վրացական աղնվականների ու կալվածատերերի համար իրոք անախորժ «հոբելյանական նվեր» եր, վորը մեծ զլացավանք պատճառեց ժանդարմերիային ու վոստիկանությանը:

Տպարանի կազմակերպումը և անլեզալ գրականության հրապարակումը պահանջեցին բացառիկ խիզախություն, յեռանդ, համառություն և շատ ուժ: Լադո Կեցիսովելին, ապրելով տպարանում, ամբողջովին նվիրվեց այդ աշխատանքին: Լադոն ամբողջ ամիսներով աշխատում եր համարյա գիշեր-ցերեկ, առանց մեջքն ուղղելու: Նա սիստեմատիկաբար հոգվածներ և այլ նյութեր եր ստանում «Բրձոլա» թերթի համար ընկեր Ստալինից և Թիֆլիսի ղեկավար սոցիալ-դեմոկրատական խմբի մյուս անդամներից: Մի շաբաթ հոգվածներ լադոն ինքն եր գրում, միաժամանակ կատարելով խմբագրի, սրբագրիչի, գրաշարի ու տպագրիչի գերը, սիրով առաջ տանելով այդ բարդ և ոիսկի հետ կապված դորձը:

Լադոն տպարանում կատարած իր լարված աշխատանքը համառեղում եր կազմակերպչական մեծ աշխատանքի հետ: Նա ղեկավարում եր ՌՄԴԲԿ-ի Բագվի կոմիտեն և Բագվի ամբողջ սոցիալ-դեմոկրատական աշխատանքը, դաստիարակելով հեղափո-

իսկան բանվորների ակտիմը լենինյան «Իսկրա»-յի վոգով, համախմբելով նրան լենինի գաղափարների շուրջը:

Կեցխովելին Բագվիլի իր ամբողջ բազմակողմանի հեղափոխական աշխատանքը կատարում եր ՌՍԴԲԿ-ի Թիֆլիսի ղեկավար խմբի և ընկեր Ստալինի ցուցումներով: Լադոն սիստեմատիկ գրավոր կապ եր պահպանում ընկեր Ստալինի հետ, իսկ կարեռագույն հարցերում ցուցումներ և խորհուրդ ստանալու համար գալիս եր Թիֆլիս և Բաթում՝ ընկեր Ստալինի մոտ:

Վ

Աշխատելով Բագվում, Լադո Կեցխովելին կապ հաստատեց Վ. Ի. Լենինի հետ, և Վագիմիր Խլիչի առաջադրանքով Բագվիլի տպարանն սկսեց բարձացնել լենինյան «Իսկրան»:

«Իսկրան» և Բագվիլի տպարանում տպագրված իսկրայականայլ նյութերը լայնորեն տարածվում ելին Ռուսաստանի հարավային քաղաքաներում: Դրա հետ միաժամանակ, Լադոն հաջողեցրեց իսկրայական հրատարակություններն արտասահմանից Ռուսաստան փոխադրելու դորձը՝ Վիեննա—Թալրիդ—Բագու գծով:

Յերբ 1902 թվականի մարտին տպարանի բոնվելու վտանգ ստեղծվեց, վորոշեց տպարանը Բագվիլից փոխադրել Ռուսաստան: Տպարանի համար տեղ փնտուելը հանձնարարվեց Լադո Կեցխովելուն: Այդ նորագույն նա 1902 թ. ապրիլին Ռուսաստան մեջ:

Լադոն շրջեց մի շարք քաղաքներ (Կիեվ, Սամարա և այլն), բայց այդ քաղաքների կուսակցական կազմակերպությունները չկարողացան նրան անհրաժեշտ ողնություն ցույց տալ տպարանը կազմակերպելու պայմանների նախապատրաստման մեջ, և 1902 թվականի ոգոստոսին նա վերադարձավ Բագու ու նոր չենք վարձեց տպարանի համար Զարդովայա փողոցում:

Վերջապես, Ժանդարմերիային հաջողվեց դժնել անխոնջ հեղափոխականի հետքը, և 1902 թվականի սեպտեմբերի 2-ին Լադո Կեցխովելուն ձերբակալեցին Բագվում ու նետեցին Բագվիլի բանտը, վորտեղից 1902 թվականի սեպտեմբերի վերջերին փոխադրեցին Թիֆլիսի Մետեխի բանտը: Լադոն ձերբակալվելիս ընկերներին չկատարելու համար, ամբողջ հանցանքն իր վրա վերցրեց և համարձակ կերպով հայտարարեց, վոր ինքը «պրոֆեսիոնալ հեղափոխական Վլադիմիր Կեցխովելին ե»:

Հարցաքնության ժամանակ Լադոն իրեն պահում եր բաց-

ով արժանապատվությամբ և անհողդողությամբ: Բագվիլի ժանապարմները վոստիկանության դեպարտամենտին ուղարկած իրենց զեկուցադրում նրան բնորոշում են վորպես «չափաղանց ճարպիկ», զգույշ մարդու, վորը հարցաքնության ժամանակ ձեռք ե առելք բոլոր միջոցները, ուրիշներին չվտանգելու համար... իսկ իր գործակիցների անունները տալուց Կեցխովելին, ինչպես և մյուսները: Նույնպես հրաժարվեց, վորի չնորհիվ առայժմ չի հաջողվել պարզել մի քանի անձերի հեղափոխական գործունեության կապը»: (Վրաստանի ԽՍՀ-ի Կենտրոնական արխիվային վարչություն, Փ. 36, 467 գործ, հատոր 2, էջ 7—23):

Բանտի ռեժիմը չեր կարող ընկնել Լադո Կեցխովելու յերկաթե կամքը: Անվեհեր հեղափոխականն այստեղ ել շարունակում եր սլայքարը: Նա կապ եր հաստատել կալանավորների հետ, անդուր պայշար եր մղում բանտային կարգերի գեմ, կազմակերպելով կալանավորների գործադուլներ ու յելույթներ:

Բանտի վարչությունը վորոշեց փրկել դահիճների մունիթիրի պատիվը: Ինքնակալության սանձարձակ գամփոնները վոռնացին «իշխանության վոտնահարված պրեստիժը» վերականգնելու մասին:

Ահա թե ինչ եր գրել Մետեխի բանտապետը Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության պետին.

«Պատիվ ունեմ Ձերդ բարձրագննությանը խնդրելու՝ զինվորական բանտ փոխադրել բերդում պահվող քաղաքական կալանավոր Վլադիմիր Կեցխովելուն, վորը մշտապես ամբողջ ժամանակ՝ Մետեխի բանտը նրան նետելու որից, իրեն ցույց ե տալիս ամենավատ կողմից՝ իր անվայելուց վարմունքներով»:

Նրան բանտ նետելու ժամանակամիջոցում տեղի ունեցած անկարգությունների մեծ մասն իրենց ծագմամբ պարտական են գարձյալ այդ կալանավորին, վորն ամենից բարոյալքիչ ազդեցությունն ե գործում սեկրետներում, իրեն շրջապատող ընկերակեցների վրա:

Հուլիսի 15-ին տեղի ունեցած վերջին անկարգություններին Կեցխովելին ամենազործոն մասնակցություն ցույց տվեց, վորի համար յենթարկեց զիսցիպլինար տույժի, նետվելով մութ կարցեր յոթն որով:

Այդ զիսցիպլինար պատժի ժամկետը լրանալուց հետո, ցանկալի կլիներ, առանց Կեցխովելուն տանելու գաղտնի չենքերի կորպուսը, — այն միջավայրը, վորտեղ նրա ազգեցությունը հարմար հող ե գտնում, — անհապաղ փոխադրել նրան զինվորական

քանտը, վորպեսզի ապագայում վերացվեն անկարգությունները՝ քաղաքական կալանավորների մեջ, վերականգնվի իշխանության վոտնահարված պրեստիժը, հարդանք ներշնչվի դեպի բանտային վարչության որինական պահանջները և դրանով իսկ հնարավոր մինի անարդել, ճշտիվ կատարել ծառայության բոլոր ալարտականությունները»։ (Վրաստանի կենտրոնական արխիվ, արխ. Փ. № 7.427 գործ, Թիֆլիսի ժանդարմական նահանգական վարչության 1903 թվականի գործը, ըստ վերդր. № 8, հատոր 4, թէրթ 2)։


VI

Լադո Կեցիսվելին մինչև իր կյանքի վերջին բոպեն ցուցաքերում եր հեղափոխական անհաշոռվություն, արիություն, անդրդվելիություն և անվեհերություն։ Բանտ նետված լինելով, նա այնտեղ ել վոչ թե պաշտպանվում եր, այլ հարձակում եր գործում ինքնակալության վրա։

Լադոյի մարտական վոգին ընկճելու համար բանտի վարչությունը գործի յեր գնում ռեպրեսիաների ամբողջ զինանոցը՝ նրան կարցեր ելին նստեցնում, խլում ելին անկողինը, խլում ելին դրքերը, զրկում ելին զրոսանքից, արգելում ելին դրսից բանստանալ… բայց Լադոն անձնատուր չեր լինում։ Ի պատասխան ռեպրեսիաների, նա պատուհանից բարձրածայն աղաղակում եր՝ «Կեցեց» քաղաքական աղատությունը։ Կորչի՛ ինքնակալությունը։ Կեցեց՝ սոցիալիզմը» — և այդ կոչին արձագանքում եր բանտի ամբողջ քաղաքական բաժինը։

Հեղափոխության այդ ազնիվ ասպետն ամբողջապես տողորդված ու համակված եր հեղափոխական մտքով, զգացմունքով, գործողությամբ։

Նրա սրտում վառվում եր հեղափոխության պայքարի անմարկրակը։ Վողեշնչված, խորապես գաղափարական՝ նա իր յուրաքանչյուր քայլն ուղղում եր դեպի հեղափոխական գործի հաղթանակը։ Լադոյի պայքարի անխորտակելի վոգին, նրա արիությունը հիմք ունելին հեղափոխության գործի նկատմամբ ցուցաբերվող անձնուրաց նվիրվածությունը, ամենախոր համոզվածությունը և հավատը բանվոր դասակարգի հաղթանակի նկատմամբ, վորն անբաժան եր նրանից թե ընդհատակում և թե բանտային կազեմատներում։



Անձնիք ամրոցը։ Բանտ կարող ցարության ժամանակակից ապահովություն սպառելի լինությունը կեցված կատարվելուն

Ահա թե ինչ է գրել Լաղո Կեցիսովելին Մետեխի բանտից իր
ավագ յեղբայր Սանդրոյին՝ իր վերջին նամակում.

«Ինձ համար նահանջի ճանապարհ չկա, և յեթե լիներ ել
այդ ճանապարհը, համոզված եմ, վոր գու առաջինը կթքեյիր
ինձ վրա, յեթե յես թեկուղ մտքովս անցկացնեյի նահանջել և
վունահարել իմ սրբությունը։ Այդպես ուրեմն, սլայքա՛ր, պայ-
քա՛ր . . . Յեվ յեթե յես ընկնեմ այդ պայքարում, մի տիրիր. ամեն
մի գործ, առավել ևս ազատությունը զոհ է պահանջում . . . : «Բայց
վո՞րտեղ, ասա՛, յե՞ր առանց զոհի ազատություն և ձեռք բեր-
ված»։ Միմիայն սեփական զոհաբերությամբ կարելի յե մեր պայ-
մաններում մարդկային վերաբերմունք գտնել նրանց կողմից, ով-
քեր հափշտակել, իրենց ձեռքն են վերցրել մեր ճակատագիրը . . .
Համբերիր . . . Համբերությունը լույ բան և՝ մարդու արժանիքն
է։ Սակայն, այնտեղ, վորտեղ գործը վերաբերում և մարդկային
արժանապատվության իրավունքներին ու զգացմունքներին՝ համ-
բերությունը կամ վախկոտություն ե, կամ անդիտակցություն,
համենայն դեպք՝ խայտառակություն և մարդկային բնավորու-
թյան քայլայում։ Կյանքը թանգ ե, բոլորն ել ուղղում են ապրել,
բայց յեթե ծաղրում են քո սրբությունը, վտանահարում են քո և՛
հոգին, և՛ մարդկային արժանապատվությունը, ել այն ժամանակ
ինչի՞ յե պետք հոգին և կյանքը» («Լաղո Կեցիսովելի», հրատա-
րակություն ՌՍԴԲԿ-ի Կովկասյան Միության, 1903 թ., էջ
26—30)։

Լաղո Կեցիսովելու դեմ կազմակերպվում ե ամենաստոր վոս-
տիկանական դավագրություն, վորի դլուխ կանգնած արյունար-
ուռ ոռոմիստք Ռումիչը Լաղոյի սպանությունից յոթն որ առաջ
գրում ե, թե անհրաժեշտ է «առանձին միջոցներ» ձեռք առնել
ինքնակալության համար վտանգավոր այդ հեղափոխականի դեմ։
Սպանությունը հանձնաբարվեց պահակ Դերգիլեվին։ 1903 թվա-
կանի ոգոստոսի 17-ին առավոտյան ժամի 9-ից 30 րոպե անց Լա-
ղո Կեցիսովելուն սպանեցին իր բանտարկին սենյակում, կրակելով
պատուհանից։ Գնդակը դիսլավ սրտին, և նա իսկույն վախճան-
վեց։

Այդպես նողկալի կերպով դատաստան տեսալ ժանդարմե-
րիան բոցաշունչ հեղափոխականի հետ։

Լաղոյի դադանային սպանության լուրն արագորեն տարած-
վեց բանտում։ Փոթորկվեց քաղաքական բաժինը։ Շուտով Կեց-
իսովելու սպանությունը հայտնի դարձավ նաև քաղաքում։ Թիֆ-

Ասի բանվորները, վորոնք սիրում եյին Լաղոյին, անեծք եյին
ուղղում ատելի դահիճներին:

Մետեխի բանտը շրջապատվեց կաղակներով:

Լաղոն վոստիկանության համար վտանգավոր եր վոչ միայն
կենդանի ժամանակ, այլև իր մահից հետո: Նենդ մարզասպան-
ները վախեցան կեցխովելու մարմինը հանձնել թաղելու համար:
Ժանդարմները, բանվորներից և ամենամերձափոր ազգականներից
դադանի, գիշերը նրան թաղեցին Թիֆլիսի զինվորական գերեզ-
մանատանը:

Լաղո կեցխովելու սպանության առթիվ ՌՍԴԲԿ-ի Թիֆլիսի
և Բագվի կոմիտեները թուուցիկներ բաց թողին: Բագվի թուուցի-
կի համար վորաբես եպիգրաֆ վերցվել եյին Մաքսիմ Գորկու
հետեւյալ խոսքերը. «Ո՞վ խիզախ բազե, թշնամու դեմ մզլող
պայքարում արյունաքամ յեղար դու...»:

«Այդպիսի մարտիկների համար,—գրված ե թուուցիկի մեջ,—
լավագույն հուշարձանն ու հատուցումը կատաղի պայքար մղելն ե
այն ինքնակալության դեմ, վորն սպանեց նրան, այն վայրագ
կամայականության դեմ, վորը խում ե մեղնից մեր լավագույն
բարեկամներին: Մենք, ընկերներ, հույս ունենք, վոր սպանված
բարեկամի հիշատակն անջինջ կմնա մեր հիշողության մեջ և այդ
ավելի կամրացնի մեր համատը սրբազն դործի մոտալուս հաղ-
թանակի նկատմամբ»:

Լաղո կեցխովելին իր ամբողջ պայծառ, հրաշալի կյանքն
առանց մնացորդի նվիրեց բանվոր դասակարգի դործի համար
մզլող հեղափոխական պայքարին:

Անհողողող, անվեհեր պրոլետարական հեղափոխականի նրա
հերոսական պատկերն Անդրկովկասի ու Վրաստանի արի հեղա-
փոխականների ու բոլշևիկների միայն մի սերունդ չե, վոր դաս-
տիարակել ե:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ն Ե Ր

ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ ՌՈՏՄԻՍՏՐԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԹԻՖԼԻՍԻ ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

Ներկայացնելով սույն գրագրությունը՝ հաղորդում եմ նորին մեծապատ-
վության՝ Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության պ. պետին, վոր
մեղադրյալ Վարդիմիր Կեցխովելին, ի թիվս այլ հանցանքների, վոր շարա-
գրած են 1903 թ. մայիսի 31-ին վոստիկանության դեպարտամենտին ուղղվ-
ած № 3105 հաղորդագրության մեջ, կատարված հետաքննությամբ մերկաց-
ված ե նաև այն բանում, վոր յեղել ե այն գաղտնի տաղարանի գլխավոր կաղ-
մակերեւչը, վորը զանազան ժամանակ թիֆլիսի, Քութայիսի և Բագվի նա-
հանգների շրջաններում տպագրել ե նախքան Կեցխովելու ձերբակալումը, այ-
սինքն՝ մինչև 1902 թ. սեպտեմբերը, տարածված գրեթե բոլոր թուուցիկներն
ու հեղափոխական այլ հրատարակությունները: Բառվորում նույն հետա-
քննությամբ Կեցխովելին գլխավորապես մերկացված ե այն բանում, վոր մն-
դաղըյաներից միքանիսի հետ միատեղ իր գաղտնի տաղարանում տպագրել ե
զորքին ուղղված թուուցիկներ, վորնք նպատակ են ունեցել կոչ անել դոր-
քին՝ բացահայր անհանգնության ու բունտի: Ընդումին այդորինակի թուու-
ցիկները, ինչպես հավասարված ե, ամենալայն կերպով տարածված են յեղել
Թիֆլիսի շրջակայքում մանեվրող զորքի և Վրաստանը Ռուսաստանին կցելու
հարյուրամյա հոբելյանը տոնելու առթիվ 1901 թ. սեպտեմբերի վերջին
բարձրաստիճան անձերի համար տեղի ունեցած զորատեսի ժամանակ այստեղ
հավաքված գրեթե հարյուր հազար հոգաց բաղկացած զորքի մեջ, ըստու-
րում հիշյալ թուուցիկների տարածումը զորքի մեջ ծառայել ե վորպես նյութ
միքանի հարցաքննություններ կատարելու համար. բացի զրանից, հենց նույն
հետաքննությունից յերկում ե, վոր Վլադիմիր Կեցխովելին յերկու տարուց
ավելի յե, վոր փնտավոր ե վորպես զինապարտությունը կատարելուց լուու-
սափող, ինչպես նաև զոստիկանության դեպարտամենտ կողմից՝ վորպես մի
այլ քաղաքական գործով անպայմանորեն կալանքի յենթակա անձ, ըստու-
րում Կեցխովելին չնորհիլ իր հեղափոխական լայնածավալ կապերի ու ծանու-
թությունների ոտար ազգանուններով, կեղծ անձնագրերով, —իրեն փնտոելու
ժամանակ, կարողացել ե միանգամայն անպատիք կերպով միքանի անդամ
անցնել ոռուսական ահմանը և մատնանշված ժամանակի ընթացքում թագնված
ապրել այնպիսի համեմատարար մեծ կենսորուններում, ինչպես Թիֆլիսն ու
Բագվուն, և կաղմակերպել այնպիսի մի բարդ և սիսկի յենթակա ձեռնարկու-
թյուն, ինչպես գաղտնի տաղարանն ե, վորը գործում եր գրեթե յերկու տա-

բեր, վորի մի մասն ել, ի դեպ, մինչև այժմ այնպես ել մնաց առանց հայտաբերման և վորի կազմակերպումը, ինչպես հավասարված ե, մեծ փող ե նստել, վորը հաշարվել ե զանազան մարդկանցից:

Հաղորդելով վերը շարադրվածը, պատիվ ունեմ զեկուցելու, վար կեցիսով վելու նախնական աքսորումը վորեւ հեռու տեղ — մինչև հետաքննության վերջնական ակտումը—թեկուղ և ցանկալի յի, բայց կեցիսովելու անձնավորության ազատության համար ոգտակար կլիներ, նկատի ունենալով հեղափոխական շարժման համար կեցիսովելու ունեցած լրջությունն ու նշանակությունը՝ ինչպես ապացուցված ե հետաքննությամբ, վորպեսվի աքսորման ժամանակ կեցիսովելու դեմ ձեռք առնվեն վորեւ հատուկ միջոցներ, վորովհետև կեցիսովելին, ազատություն ստանալով, առաջին իսկ հնարավորության դեպքում կիմախչի արտասահման և ապագայում իր ծայրահեղ համողմունքների պատճառով՝ հավանականութեն մնջ չարիք կրերի, վորպիսի նպատակով ել, ըստ յերկութին, հիշյալ կեցիսովելին միջնորդություն ե հարուցել իրեն կալանքից ազատելու մասին, նախնական աքսորի ուղարկելով այնտեղ, վորը նշանակված ե դատավճռի մեջ: Բնդսմին ավելացնում եմ, վոր ինձ հայտնի չե, թե նրա համար, իմ կատարած հետաքննության հետևանքով, ինչ պատիվ ե սահմանված և թե ուր և յենթարդում աքսորել կեցիսովելուն, վորովհետև զեցիսովելու և ուրիշների» մասին կատարված հետաքննությունը գոնովում ե թիֆլիսի դատական պալատի պ. Դատավադի տնօրինության տակ:

Ժանդարմների առանձին կորպուսի ոռոմիստր Ռումիչ:

10 սուստոսի 1903 թ.

Թիֆլիս

Նկ....

Արխ. Փ. № 36, գ. № 467, հ. 2. թ. 113—115. էջ, 59—60:

Պրոլետարմեր բոլոր յերկիրների, միացե՛ք.

ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ | ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆԿՈՐԱԿԱՆ
ԿՈՒՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԸՆԿԵՐՈՒՄ:

Կիրակի առավոտյան ժամը 10 և կեսին Մետեխի բանտում, փակ կամերայում հրացանի հարվածով տեղնուածեղը սպանված ե ազատության և սոցիալիզմի աննկուն մարտիկ լաղո կեցիսովելին: Պատանեկական տարիներից սկսած մինչև իր վերջին չունչը նա պաշտպանում եր մարդու սրբազն իրավունքներն ու բողոքում եր ամեն տեսակ կամայականության ու բռնության դեմ: Վո՛չ բանափ պատերը, վո՛չ կարցերը չթուլացրին նրա եներգիան. ամեն որ բանաը թնդում եր նրա բարձր կանչերով. «Կորչի՛ ինքնակալությունը: Կեցցե՛ հանրապետությունն ու սոցիալիզմը»:

Կոնսպիրատիվ նկատառումներից գրդած մենք ստիպված ենք լույլ այն ամենախոչըր հեղափոխական ձեռնարկումների մասին, վորոնց հոգին եր նա: Դեռևս պատանի հասակում նա թիֆլիսում մասնակցել է 1893 թվականի սեմբնարական շարժումներին և զրա համար արտաքսվել: Այսուհետո նա զնուժ է կիեկի սեմբնարիան, բայց շատ չուտով ընկնում ե բանտ: 1897 թվականից նա ամենաբռուն մասնակցություն ունեցավ կովկասյան բանվորական շարժման մեջ: Թիֆլիսում կազմակերպեց տրամվայի բանվորների առաջին գործադրությ, սակայն մի կոնդուլմորի կողմից մատնված լինելով, անցնում ե անլեզարդ դրության: Նա զնում ե բազու և ուրիշների հետ միասին հրմք ե զնում բազի կազմակերպության: Նրան պատահաբար բանտարկեցին Բաղզում անցյալ տարվա աշնանը:

ԸՆԿԵՐՈՒՄ: Այս վրդովեցուցիչ վոճրագործությունը չթողնենք առանց բողոքի:

Կորչի՛ ինքնակալությունը:

Կեցցե՛ ղեմոկրատական հանրապետությունը:

Կորչի՛ կապիտալիզմը:

Կեցցե՛ սոցիալիզմը:

Թիֆլիսի կոմիտե:

Սոցիալ-դեմոկրատների տպարան

Միասնական կուսարժակ, 25/III 1928 թ. մս. գործ № 909, Արխ. Փ. 3, գ. № 496, թ. 200



Թարգմանեց Պ. Արելյան
Խմբ. Ս. Կիրակոսյան

Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան

Սրբագրիչ՝ Վ. Զիդեղյան

Եռնարու սրբագրիչ Լ. Արովյան

Գլավլիտի լիազոր 4900, հրատ. № 486,
Պատվեր № 152, տիրաժ 15.000

Հանձնված և արտադրության 1/VIII 1937 թ.

Ստորագրված և տպագրելու 16/VIII 1937 թ.

Գինը 15 կ.

Հայկուսիրատի տպարան, Յերևան, Ալավերդյան № 71

ՀՀ Ազգային գրադարան



NL0179489

ԳԻՆԸ 15 4.

Ա. ԲԵՐԻԱ
ԼԱԴՈ ԿԵՇԽՈՎԵԼԻ

Արմերնալտ, Երևան, 1927